



ՈՐՈՇ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ
(Մաս V. Գործողություններ օդային հարձակման և հրետակոծության
ժամանակ)

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՕԴԱՅԻՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Օդային հարձակման ժամանակ շատ կարևոր է խուճապի չմատնվել: Եթե գտնվում եք բաց տեղանքում, պառկեք դեմքով ներքև և վերև չնայեք: Եթե թաքստոցները մոտ են, սողանցեք դեպի պատասպարաններ: Կտրուկ վազքը և շարժումները արգելվում է, քանզի այն անշուշտ, կնկատի հակառակորդի ուղղաթիռի օդաչուն: Հիշեք, որ ուղղաթիռը նախ շրջադարձ է կատարում, որից հետո է կրակ բացում (կրակելու համար թռիչքի չափազանց ցածր բարձրության դեպքում ուղղաթիռը ստիպված է բարձրանալ): Ուղղաթիռի վրա կրակելն արդյունավետ է, երբ այն շրջադարձային մանևր է կատարում, այդ դեպքում անհրաժեշտ է կրակել առկա բոլոր զինատեսակներից, փորձելով ստեղծել արգելափակիչ կրակի գոտի՝ կատարելով առաջնանշանառում հենց թռիչքի ուղղությամբ:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՐԵՏԱԿՈՇՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հրետակոծության ժամանակ պետք է հնարավորինս խորը թաքնվել խրամատում: Որքան խորն է խրամատը, այնքան մեծ է ողջ մնալու հավանականությունը:

Արկերի թռիչքների միջև ընկած ընդմիջումների ժամանակ բարձրացրեք գլուխը պատվարից (брыцвер) վերև մինչև աչքերի մակարդակ և դիտարկեք՝ հակառակորդը կարող է հարձակվել ընդմիջման ժամանակ: Եթե բաց տարածքում եք հայտնվել հրետակոծման տակ, արագ պառկեք գետնին և ոչ մի դեպքում ոտքի չկանգնեք: Հրետակոծության միջև ընկած դադարի ընթացքում անհրաժեշտ է սողեստող շարժվել դեպի տեղանքի ամենամոտ ծալքերը կամ դեպի ապաստարան: Որքան ցածր մակարդակում եք գտնվում, այնքան մեծ է ձեր գոյատևման հավանականությունը: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ թփերը, ինչպես նաև առանձին ծառերը, առաջացնում են ականի պայթյուն բարձրության վրա, ինչի արդյունքում վնասման տարածքը մեծանում է, և բեկորները կարող են անկանխատեսելիորեն փոխել իրենց հետագիծը: Եթե մեկը վիրավորվել է, ապա օգնությունը պետք է ցուցաբերվի միայն հրետակոծության դադարից հետո: Պետք է հիշել, որ հրետակոծությունը կարող է վերսկսվել: Հիշե՛ք, որ հակառակորդը ակտիվորեն կիրառելու է քվադրոկոպտերներ և տարատեսակ այլ ԱԹՄ-ներ՝ БОГ տիպի զինամթերքը նետելու և հրետանու կրակը ուղղորդելու համար, այնպես որ փորձեք տեղաշարժվել գաղտնի և լարեք լսողությունը, հետևեք օդային տարածքին: Չ՝ հանեք սաղավարտներն ու գրահաբաճկոնները:

Աղբյուրը. https://vk.com/wall-127249967_19094?ysclid=m9enjnjuuy803997394